

Coca-Cola Hellenic Bottling Company Armenia

CCHBCA-MG-P-006 Rev.B

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ (ԱԱԱ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա ընկերությունը, որն արտադրում է ոչ-ալկոհոլային ըմպելիքներ Կոկա-Կոլա ընկերության ապրանքային նշանի տակ հավատում ենք, որ մեր մարդիկ հանդիսանում են մեր ամենամեծ արժեքը: Անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրի ապահովումը մեր առաջնային պատասխանատվության ոլորտներից մեկն է և հիմնարար նշանակություն ունի մեր հաջողության համար: Այս գաղափարը մեր մշակույթի մաս է կազմում, իսկ այս քաղաքականությունը ենթակա է կիրառման գործարանի ամբողջ տարածքով մեկ:

Մենք ջանքեր ենք կիրառում ԱԱԱ վիճակը բարելավելու ուղղությամբ մեր աշխատակիցներին ներգրավելով և պահպանելով տեղական համապատասխան իրավական և Կոկա-Կոլա ընկերության ԱԱԱ պահանջները, ինչպես նաև OHSAS 18001:2007 ԱԱԱ կառավարման համակարգերի ստանդարտը և ընկերության ստանձնած այլ պահանջները:

Մենք մեր գործունեությունը կիրականացնենք՝ նպատակ ունենալով ապահովել մեր աշխատակիցների, կապալառուների և այլ ներգրավված կողմերի համար աշխատանքի հետ կապված առողջական վնասի և հիվանդությունների զրոյական ցուցանիշ:

Այդ նպատակով ընկերության յուրաքանչյուր մակարդակում պետք է իրականացնել հետևյալը.

Կառավարման համակարգեր

Կիրարկել ԱԱԱ քաղաքականություն, ստանդարտներ և կառավարման համակարգեր, ապահովել ընկերության ԱԱԱ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը և խթանել ԱԱԱ գործունեության շարունակական բարելավումը:

Իրավական նորմերին համապատասխանություն

Ապահովել համապատասխան տեղական իրավական պահանջներից (բոլոր համապատասխան օրենքները, կարգերը եւ օրենսդրական ակտերը) և Կոկա-Կոլա ընկերության ԱԱԱ վերաբերյալ պահանջներից խստագույնների կատարումը:

Ռիսկերի գնահատում և կառավարում

Հայտնաբերել եւ գնահատել ԱԱԱ վերաբերյալ ռիսկերն ու առաջացող միտումները եւ ձեռնարկել համապատասխան գործողություններ, օգտագործել պարբերական և օբյեկտիվ գնահատումներ՝ Կոկա-Կոլա ընկերության և համապատասխան իրավական պահանջներին համապատասխանությունը ապահովելու նպատակով:

Ներգրավված և ունակ աշխատակիցներ

Ապահովել դերերի և պատասխանատվության հստակ բաշխում, վերապատրաստում, հաղորդակցային համակարգեր և մասնակցության հնարավորություն՝ բոլոր մակարդակներով աշխատակիցների արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու նպատակով:

Միջադեպերի և արտակարգ իրավիճակների կառավարում

ԱԱԱ վերաբերող արտակարգ իրավիճակները կառավարել այնպես, որ պաշտպանվեն ընկերության գույքը, աշխատակիցները, կապալառուները, հաճախորդները և հասարակայնությունը, ինչպես նաև մեր ապրանքատեսակների հանրային ընկալումը, Կոկա-Կոլա ընկերությունը և Կոկա-Կոլա համակարգը՝ կիրառելի իրավական ակտերին և Կոկա-Կոլա ընկերության պահանջներին համահունչ:

Շահառուների ներգրավվածություն

Բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է, մենք կհամագործակցենք ներքին և արտաքին շահառուների հետ՝ հաղորդակցության և քաղված դասերի ու լավագույն փորձի վերաբերյալ տեղեկատվության տրամադրելու միջոցով, որպեսզի հզորացնենք աշխատատեղերի հետ կապված ռիսկերը նվազեցնելու ընկերության ունակությունը:

Առաջատարության հանձնառությունը

Տեսանելի դարձնել Ընկերության առաջատարության հանձնառությունը ԱԱԱ ծրագրերի իրականացման և բարելավման գործում հետևյալ միջոցներով.

- ԱԱԱ ծրագրերի ինտեգրացումը բիզնես ծրագրերում, բիզնեսի արդյունքների և գործունեության գնահատումներում, ինչպես նաև բիզնեսի այլ առօրեական գործողություններում:
- Մշտական և տեսանելի առաջատարության ներգրավվածություն ԱԱԱ ծրագրերի հաղորդակցման և բարելավման գործողություններում, նեոարյալ կազմակերպության ԱԱԱ նպատակների և խնդիրների ամենամյա արդիականացումը: